

ՍՐԲԱԶԱՆ ՀԱՅՐԸ ԿԸ ՊԱՏԱՐԱԳԷ ՍԱԳՐԱՄԷՆԹՈՅԻ  
ՍՈՒՐԲ ՅԱԿՈՒ ՀԱՅՑ. ԵԿԵՂԵՑԻՈՅ ՄԷՋ

Կիրակի, Մայիս 17ին Սրբազան Հայրը Սուրբ Պատարագ մատուցեց և քարոզեց Սագրամենթոյի Սուրբ Յակոբ Հայց. Եկեղեցւոյ մէջ: Սուրբ Սեղանին սպասարկեցին Եկեղեցւոյ Հոգեւոր Հովիւը՝ Արժ. Տ. Ասողիկ Քհնյ. Ժամկոչեան և Սարկաւագներ: Սրբազան Հօր քարոզի բնաբանն էր. *«Ես եկայ որպէսզի կեանք ունենան, եւ զայն առատապէս ունենան»* (Յովհ. Գլուխ Ժ. 10):

Կիրակնօրեայ Վարժարանի աշակերտ-աշակերտուհիները ներկայ գտնուեցան Սուրբ Պատարագի արարողութեան և Սրբազան Հայրը անոնց հետ մտերմիկ հարց ու պատասխանի հաճելի վրոյց մը ունեցաւ:

Սուրբ Պատարագի աւարտին եկեղեցւոյ սրահին մէջ տեղի ունեցաւ ճաշկերոյթ, որու ընթացքին Սրբազան Հայրը *«Հայ Ոգի»* շքանշանով պատուեց եկեղեցիէն ներս երկարամեայ ծառայութիւն մատուցող Բրշ. Ճէյմս Սարկաւագ Թաշճեանը և մասնաւոր պատուի արժանացուց շուրջ 97ամեայ Տիկին Սիլվիա Ճորճորեանը, 98ամեայ Տիկին Մէրի Կարապետեանը և 86ամեայ Տիկին Ալիս Սփէնկլըր:

Տէր Ասողիկ իր երախտագիտութիւնը յայտնեց Սրբազան Հօր՝ իր հովուական այս այցելութեան համար: Սրբազան Հայրը տուաւ իր ոգեւորիչ պատգամը և աղօթքով փակեց ճաշկերոյթը: